

Կազմված է 28.06.2017թ.

բաղկացած է 15 թերթից

Տպագրված է 2 օրինակ

Օրինակ ____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2Ժ -17

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի,

կայացած 2017թ. մարտի 28-ին, ժամը 16-00

28.06.2017թ.

Ք. Երեվան

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վոլոդյա Գասպարյանը, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց Արշալույս Ներսիսյան, Գայանե Ղազարյան, Արմինե Ժամհարյան:

Հաշվիչ հանձնաժողովը զեկուցեց, որ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցում են.

Ընկերության տեղաբաշխված 10.348.896 բաժնետոմսերի սեփականատերերից 49 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք հանդիսանում են 8.376.274 բաժնետոմսերի սեփականատերեր (80,94), այդ թվում Ընկերության 8 279 117 բաժնեմասի սեփականատեր ՀՀ Պետական գույքի կառավարման վարչություն (80.0%) լիազոր ներկայացուցիչ Վ. Գասպարյան:

Քվորումը ապահովված է և ժողովը անցավ օրակարգի հաստատմանը:
Ժողովի նախագահ Վ. Գասպարյանը ներկայացրեց ժողովի օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության 2016 թ. տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության արտաքին աուդիտի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2016 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2016 թ. շահույթ/վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության 2016թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում:
6. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին:

Ժողովի օրակարգը դրվեց քվեարկության:

Բաց քվեարկությամբ օրակարգը հաստատվեց միաձայն:

Մասնակիցներն անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

Հարց 1. <<Ընկերության 2016թ. տարեկան հաշվետվության հաստատում>>

Ընկերության գլխավոր տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ադամյանը, որն այդ պաշտոնում նշանակվել է 2017 թվականի փետրվարի 17-ին, ներկայացրեց Ընկերության 2016թ. հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական ցուցանիշները, նախատեսված և փաստացի կատարված աշխատանքների ծավալները, կատարված ծախսերի կառուցվածքը, որնցում գերակշռում են աշխատավարձի վճարման հետ կապված ծախսերը և հիմնական միջոցների մաշվածքը (գեկույցը կցվում է): Նշեց որ 2016թ.-ին գործունեության արդյունքով ձևավորված վնասի չափը կազմել է **102 238,0 հազ. դրամ:**

Ժողովի Նախագահ Վ. Գասպարյանն առաջարկեց հարցը դնել քվեարկության

Հարց 1.

<<Ընկերության 2016թ. տարեկան հաշվետվության հաստատում>> դրվեց քվեարկության, որի արդյունքներն են

Կողմ՝ 8.286.536 դեմ՝ 918 ձեռնպահ՝ 88.820

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Ընկերության 2016 թվականի հաշվետվությունը:

Մասնակիցներն անցան օրակարգի 2-րդ հարցի քննարկմանը:

Հարց 2. << Ընկերության արտաքին աուդիտի եզրակացության ներկայացում>>

Ա. Ադամյանը իր զեկույցում նշեց նաև Ընկերությունում իրականացված արտաքին աուդիտի եզրակացության վերաբերյալ տեղեկատվությունը, առ այն, որ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան, 2017թ. ապրիլ ամսին Ընկերությունում իրականացվել է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման, դրանց արժանահավատության և ներկայացման գնահատման նպատակով: Իրականացված Աուդիտի եզրակացության համաձայն, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Ժողովի Նախագահ Վ.Գասպարյանի այն հարցին, թե արդյոք իրականացվել է Ընկերության գործունեության համալիր աուդիտ կամ վերլուծություններ՝ վնասի պատճառները բացահայտելու համար, Ա.Ադամյանը պատասխանեց, որ միայն իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների կազմման, դրանց արժանահավատության և ներկայացման գնահատման աուդիտ:

Այնուհետ ելույթի իրավունք խնդրեց խորհրդի անդամ Է. Մաթևոսյանը: Նա իր ելույթում նշեց, որ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ն և Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն մշտապես համագործակցել են միմյանց հետ և «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի կողմից Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի դեմ՝ դեբիտորական պարտքի բռնագանձման և անշարժ գույքի ու դրամական միջոցների վրա կալանք դնելու պահանջը նպատակահարմար չէ, քանի որ դա անմիջապես վնասում է երկու Ընկերությունների կոլեկտիվներին, ինչպես նաև Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի դրամական միջոցների վրա կալանք դնելու որոշումը խոչընդոտում է երկու գործարանների բնականոն ընթացքին: Նշեց նաև, որ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրում կան իրագործելի դրույթներ, որոնց իրականացումը կբերի Ընկերության հետագա տնտեսական զարգացմանը: Ելույթի վերջում առաջարկեց որպեսզի Ընկերության կոլեկտիվը առաջարկի տնօրինությանը դատական հայցը ետ վերցնելու և խնդիրը ավելի խելամիտ եղանակով լուծելու համար:

Ժողովի Նախագահ Վ.Գասպարյանը ելույթի առնչությամբ ասաց, որ Ընկերության հետագա գործունեության համար նախատեսվող միջոցառումները հետևյալն են.

- Ընկերությունը ընդգրկված է 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրում և մասնավորեցումից հետո կան հստակ պայմաններ ու նախադրյալներ՝ հետագայում այն տնտեսապես ավելի լավ կարգավիճակի բերելու համար,

- Ընկերության կողմից ներկայացված ռազմավարական զարգացման ծրագիրը այժմ գտնվում է քննարկումների փուլում և Ծրագրի իրականացման համար, դրական մոտեցման դեպքում, այն չի խոչընդոտի Ընկերության մասնավորեցման գործընթացին,

- ինչ վերաբերում է դեբիտորական պարտքի բռնագանձման հայցը ետ վերցնելու առաջարկին, ապա պարտքը ենթակա է ետ վերադարձման, իսկ եթե կան ավելի խելամիտ առաջարկություններ՝ խնդիրը ոչ դատական կարգով լուծելու համար, ապա դրանք ներակայացվեն գրավոր:

Ամփոփելով հարցի քննարկումը, ժողովը անդրադարձավ Օրակարգի 3-րդ հարցին:

Հարց 3. <<Ընկերության 2016 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում>>

Ա. Ադամյանը իր ելույթում նշեց, որ Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հիմնական ցուցանիշները 1-ին Հարցի քննարկման ժամանակ մանրամասն ներկայացվել է, բացի այդ արտաքին աուդիտը տվել է իր դրական եզրակացությունը և Ընկերության հաշվապահական հաշվեկշիռը հրապարակված է Ընկերության կայք-էջում:

Ժողովի Նախագահն առաջարկեց հարցը դնել քվեարկության

Հարց 3.

<<Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում>> դրվեց քվեարկության, որի արդյունքներն են

Կողմ՝ 8.286.536 դեմ՝ 918 ձեռնպահ՝ 88.820

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռը:

Ժողովի Նախագահն առաջարկեց Օրակարգի 4-րդ հարցը դնել քվեարկության

Հարց 4.

<<Ընկերության 2016 թ. շահույթ/վնասի/ հաշվի հաստատում>> դրվեց քվեարկության, որի արդյունքներն են

Կողմ՝ 8.286.536 դեմ՝ 918 ձեռնպահ՝ 88.820

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Ընկերության 2016թ. **102 238,0 հազ. դրամ** վնասի չափը:

Ժողովի Նախագահը նշեց, որ օրակարգի 5-րդ հարցը՝

<<Ընկերության 2016թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում>>, քննարկման ենթակա չէ, գործունեության արդյունքում վնաս ունենալու պատճառով:

Հարցը չի քննարկվում և քվեարկություն չի կատարվում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Օրակարգի հինգերորդ հարցը չքննարկել և չքվեարկել:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի նախագահ Վ. Գասպարյանը: Նա նշեց, որ Ընկերության նախկին գլխավոր տնօրեն Գ. Կաֆյանը հանդիսանում է տնօրենների խորհրդի անդամ և իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, որից հետո չի մասնակցել տնօրենների խորհրդի և ընդհանուր ժողովի նիստերին: Գ. Կաֆյանին տնօրենների խորհրդի կազմից հանելու համար անհրաժեշտ է նրա գրավոր դիմումը, այդ պատճառով որոշվեց Օրակարգի այս հարցին անրադառնալ Գ. Կաֆյանի գրավոր դիմում ներկայացնելուց հետո, որը Բաց քվեարկությամբ հաստատվեց միաձայն:

Ներկայացված հարցերի վերաբերյալ արտահայտվելու համար խոսք խնդրեց Ընկերության խորհրդի անդամ, Երևանի ոսկերչական գործարան-1 <Գնումոն> ԲԲԸ գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանը: Նա իր ելույթում խոսեց երկու Ընկերությունների, կոլեկտիվների միջև ստեղծված իրավիճակի և խաթարված փոխհամագործակցության մասին: Նա նշեց, որ <<Գնումոն>> ԲԲԸ-ն ամեն ինչ անում է խաթարված համագործակցությունը և <<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲԸ-ի հետ ակտիվ ու արդյունավետ արտադրական փոխադարձ կապը վերականգնելու համար:

Ժողովի օրակարգը սպառվեց և այն հայտարարվեց փակված:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Գասպարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Օ. Ամիրյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.06.2017թ. տարեկան ընդհանուր ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 49 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,
որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից (10.348.896 հատ) հանդիսանում են
8376274 բաժնետոմսի սեփականատեր կամ ժողովին ներկա էին 80.94% ձայնի իրավունք
ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ներսիսյան

Ա. Ժամհարյան

Գ. Ղազարյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.06.2017թ. տարեկան ընդհանուր ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.
(առկա 8.376.274 ձայների քանակից)

Հարց 1. Ընկերության 2016թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատում.

Կողմ - 8.286.536 դեմ - 918 ձեռնպահ – 88.820

Ընկերության 2016թ. տարեկան գործնությունը հաստատվեց:

Հարց 2. Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաժվեկշռի հաստատում.

Կողմ - 8.286.536 դեմ - 918 ձեռնպահ – 88.820

Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաժվեկշիռը հաստատվեց:

Հարց 3. Ընկերության 2016թ. շահույթի (վնասի) հաշվի հաստատում.

Կողմ - 8.286.536 դեմ - 918 ձեռնպահ – 88.820

Ընկերության 2016թ. շահույթի (վնասի) հաշիվը հաստատվեց:

Հարց 4. Ընկերության 2016թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում.

Այս հարցը չի քվեարկվել՝ Ընկերության վնասով աշխատելու պատճառով:

Հարց 5. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին.

Այս հարցը չի քվեարկվել:

Հանձնաժողովի անդամներ

Գ. Ղազարյան

Ա. Ժամհարյան

Ա.Ներսիսյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.06.2017թ. տարեկան ընդհանուր ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 49 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից (10 348 896 հատ) հանդիսանում են 8.376.274 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 80.94% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի հարցը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

- | | | |
|------------------------|---------|----------------|
| Հարց 1. Կողմ-8.286.536 | դեմ-918 | ձեռնպահ-88.820 |
| Հարց 2. Կողմ-8.286.536 | դեմ-918 | ձեռնպահ-88.820 |
| Հարց 3. Կողմ-8.286.536 | դեմ-918 | ձեռնպահ-88.820 |
| Հարց 4. Չի քվեարկվել | | |
| Հարց 5. Չի քվեարկվել | | |

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ներսիսյան
Ա. Ժամհարյան
Գ. Ղազարյան

Հաստատվել է
<<Երևանի ոսկերչական գործարան>>
Բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրություն N2-17, 13.06.2017թ.

<<Երևանի ոսկերչական գործարան>> բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

28 հունիսի 2017 թվական

1. Ընկերության 2016թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության արտաքին աուդիտի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2016թ. շահույթի (վնասի) հաշվի հաստատում:
5. Ընկերության 2016թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում:
6. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին:

<<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲԸ

28.06.2017թ.

Ք. Երևան

Զեկույց-Հաշվետվություն

<ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ԲԲԸ-ի 2016թ. հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական ցուցանիշների, նախատեսված և փաստացի կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ

Հասույթ

2016թ. հաստատված 273 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի հասույթը կազմել է 65 279,0 հազ. դրամ կամ 23.91%, տարբերությունը՝ 207 721,0 հազ. դրամ կամ 76.09%, այդ թվում

- գործիքաշինական արտադրամասի կողմից կատարվող պատվերների գծով.
նախատեսված 84 000,0 հազ. դրամի դիմաց կատարվել է 51 968,0 հազ. դրամ ծավալի
աշխատանքներ կամ 61.86 %,

- ոսկերչական իրերի մոդելների, նմուշների իրացման գծով.
նախատեսված (96 միավոր) 19 500,0 հազ. դրամի դիմաց ոչինչ չի կատարվել կամ 0 %

- էքսկյուզիվ պատվերներով ձեռքի աշխատանքով պատրաստված իրերի իրացման գծով՝
նախատեսված (60 միավոր իր) 150 000,0 հազ. դրամի դիմաց ոչինչ չի կատարվել կամ 0 %

- Գավառում գործող խանութի միջոցով մանրածախ առևտրի իրականացման գծով.
նախատեսված 15 000,0 հազ. դրամի դիմաց՝ 600,0 հազ. դրամ կամ 0.04 %

- վարձակալությունից հասույթի գծով.
նախատեսված 4 500,0 հազ. դրամի դիմաց իրականացվել է 2 242,0 հազ. դրամ կամ 49.82 %

Ծախսեր

2016թ. հաստատված 257 854,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 167 517,0 հազ. դրամ, կամ 64.96 %, տարբերությունը՝ 90 337,0 հազ. դրամ, այդ թվում

- Նյութական ծախսումների գծով (իրացված արտադրանքի ինքնարժեք)՝ 11 574,0 հազ. դրամ,

- Աշխատանքի վճարման ծախսումների գծով (աշխատավարձ, հավասարեցված վճարումներ, սոց. հատկացումներ և հարկեր)՝ 101 616,0 հազ. դրամ,

- Հիմնական միջոցների մաշվածության ծախսումներ՝ 33 009,0 հազ. դրամ,

- Մարկետինգի և գովազդի ծախսեր՝ 0 դրամ,

- Գործուղման և ներկայացուցչական ծախսեր՝ 85,0 հազ. դրամ,

- Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր (ինտերնետ, հեռախոս և այլն)՝ 2 088,0 հազ. դրամ,

- Գրասենյակային ծախսեր՝ 130,0 հազ. դրամ,

- Կոմունալ ծախսեր (բնական գազ)՝ 5 793,0 հազ. դրամ,

- Աուդիտի ծախսեր՝ 1 750,0 հազ. դրամ,

- Այլ ծախսեր (հիմնական միջոցների վարձավճար, օժանդակ տնտեսության պահպանման ծախսեր, հողի հարկեր և տուրքեր, բանկային ծառայությունների ծախսեր)՝ 11 472,0 հազ. դրամ

Ծախսերի գծով հաստատված և կատարողական ցուցանիշների տարբերությունը կազմել է 90 337,0 հազ. դրամ կամ 64.9 %:

2016թ. տարեկան վնասի չափը կազմել է 102 238,0 հազ. դրամ (Հավելված 1):

«Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան, 2017թ. ապրիլ ամսին Ընկերությունում իրականացվել է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման, դրանց արժանահավատության և ներկայացման գնահատման նպատակով: Իրականացված Աուդիտի եզրակացության համաձայն, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2017թ. համար, Ընկերության կողմից եկամուտների և ծախսերի նախահաշիվ չի ներկայացվել ու չի հաստատվել, քանի որ նախահաշվային ցուցանիշները անմիջականորեն փոխկապակցված են Ընկերության կողմից մշակված ռազմավարական ծրագրի իրականացման հետ, որը դեռևս քննարկման փուլում է: Ծրագրից բխող տնտեսական գործունեությունը բնութագրող և ոչ մի ցուցանիշ դեռևս հաստատված չէ և այդ ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները իրատեսական չեն:

2017թ. 5 ամիսների համար իրականացված փաստացի ծախսը կազմել է 64 657,0 հազ. դրամ, իսկ հասույթը՝ 25 872,0 հազ. դրամ, տարբերությունը՝ 38 785,0 հազ. դրամ **(Հավելված 2)**, այդ թվում.

Հասույթ.

Հիմնականում ձևավորվել է գործիքաշինական արտադրամասի կողմից կատարված պատվերներից,

Ծախսերը

Ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատանքի վարձատրության գծով ծախսերը՝ 41 122,0 հազ. դրամ կամ 63.6%, այդ թվում հարկերը՝ 10 738,0 հազ. դրամ ինչպես նաև հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսերը՝ 8 408,0 հազ. դրամ կամ 13.0%:

Կամուրջային ծառայությունների մատուցման գծով ծախսերը կազմել են 4 412,0 հազ. դրամ կամ 6.82%, նյութական ծախսումների գծով՝ 3 333,0 հազ. դրամ կամ 5.15%, աուդիտի գծով ծախսեր՝ 1 750,0 հազ. դրամ կամ 2.7% և այլ ուղղություններով կատարված ծախսեր՝ 5 632,0 հազ. դրամ կամ 8.73% (վարձակալության, գրասենյակային, աղբահանության, փոստի և հաղորդակցության, բանկային ծառայությունների մատուցման, գեոդեզիական ծախսեր):

<<ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ԲԲԸ

գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա.Ադամյան